



ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ՇՐՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆ

📍 1104 NORTH MISSION ROAD, LOS ANGELES, CA 90033

☎ (323) 343-0512: (Երկուշաբթիէն-Ուրբաթ, 8:00-էն 17:00)

(323) 343-0714: (Օրը 24 ժամ, շաբաթը 7 օր)

🌐 me.lacounty.gov

✉ info@me.lacounty.gov



Մենք մեր խորին եւ անկեղծ ցաւակցութիւնը կը յայտնենք ձեզի եւ ձեր ընտանիքին՝ ձեր սիրելիին մահուան համար: Յուսանք որ այս տեղեկատվութիւնը կ'օգնէ ձեզ յաղթելու ձեր վիշտը եւ կը պատասխանէ մարմինի հետազոտումի գործընթացքին եւ դատաբժշկին դերին վերաբերեալ հարցումներուն:

Բժշկական փորձաքննութեան բաժինին դերը.

Բժշկական փորձաքննութեան բաժինը անկախ մարմին մըն է, որ կը գործէ իրաւապահ գործակալութիւններէն առանցին: Մենք կ'ուսումնասիրենք մահերը, որոնք կը պատահին Լոս Անճելոս շրջանին մէջ եւ կ'ըլլան յանկարծակի, անսպասելի կամ սաստիկ , կամ երբ մահացած անձին վերջերս բժիշկ չէ այցելած (Քալիֆորնիոյ կառավարութեան օրէնսգիրք 27491): Դատաբժշկական փորձաքննութեամբ եւ գիտական միջոցներով մենք կը տրամադրենք մահուան պատճառը եւ ձեւի անկողմնակալ որոշումները:

Ձեր հարազատին ինքնութեան հաստատումը.

Տեսողական հաստատումը կ'իրականացուի մահուան վայրին մէջ՝ քննիչին կողմէն անձնաթուղթի (քարտի) համեմատութեամբ: Որոշ պարագաներու, ինքնութեան դրական հաստատումը կրնայ պահանջել ավելորդ դատաբժշկական գործընթացքներ, օրինակ՝ մատնահետքը, ատամնաբուժական կամ էքս ճառագայթներու համեմատութիւնը, բժշկական պատուաստումները կամ գործիքները, DNA-ը կամ մարդաբանութիւնը: Մենք չենք առաջարկեր դիտումի ծառայութիւններ: Հաճեցէ՛ք կապուիլ ձեր թաղումի տնօրէնին հետ՝ թաղումի գրասենեակի դիտումի տարբերակներուն համար:

Մարմինի զննում.

Բժշկական փորձաքննութեան փոխանորդը մարմինի զննում կը կատարէ, կ'ուսումնասիրէ պարագաները եւ բժշկական պատմութիւնը՝ պարզելու համար մահուան պատճառն ու ձեւը: Ներքին անդամներու փոքր նմուշներ (biopsies) կրնան հետազոտուիլ, եւ մարմինի հեղուկներու նմուշներ կրնան պահուիլ եւ քննուիլ թմրեցուցիչներու եւ այլ նիւթերու համար: Երբեմն, անհրաժեշտութեան պարագային, հիւսուածքներու աւելի մեծ մասեր կամ նոյնիսկ մարմնի ամբողջ անդամներ կրնան պահուիլ՝ ավելորդ կամ մասնագիտական հետազոտութեան համար: Որոշ պարագաներու, ներքին զննումը կարելի է մահուան պատճառն ու ձեւը պարզելու համար:

Մահուան դատաբժշկական հետաքննութեան ժամանակ հաւաքուած տեղեկութիւնները կրնան տեսել քանի մը շաբաթ կամ աւելի, եթէ մահուան պատճառը որոշելու համար ուզուին մասնագիտական հատուկ հետազոտութիւններ: Մահուան պատճառը պարզելէ զատ, այս արդիւնքները կրնան կարեւոր ըլլալ քաղաքացիական կամ քրեական դատական գործերու մէջ: Այս ուղացումները պէտք չէ խանգարեն, որ մարմինը յանձնուի օրինական ազգականներուն՝ վերջնական թաղումին համար:

Յետ մահուան թունաբանական զննում.

Յետ մահուան թունաբանական զննումը բազմաստիճան գործընթացք մըն է, եւ ոչ թէ մէկ գործիքի քննութիւն, ինչպէս կ'երեւի բուժարանային միջավայրին մէջ, եւ անիկա կրնայ տեսել երեքէն մինչեւ վեց ամիս: Յետ մահու նմուշները թանձրացումի կ'ենթարկուին եւ կը պահանջեն արտահանումի քայլեր՝ նախքան օրինակը գործիքի մը վրայ օգտագործելը: Դեղերու իւրաքանչիւր դասակարգի նմուշը քննելու համար պէտք է օգտագործել բազմաթիւ գործիքներ: Որքան շատ դեղանիւթ յայտնուի մահացած անձին մարմինին մէջ, այնքան երկար կը տեւէ զննումը: Ասիկա է սովորական գործընթացը բոլոր դատաբժշկական յետ մահուայ թունաբանական զննումներուն:

Կրօնական առարկութիւն դիտարկումին.

Բժշկական փորձագէտներու փոխանորդները կը որոշեն դիտարկումի մը անհրաժեշտութիւնը: Հաճեցէ՛ք անմիջապէս դիմել քննիչին, եթէ կը կարծէք, որ դիտարկումը կը հակառակի մահացած անձին կրօնական համոզումներուն եւ առարկեցէ՛ք դիտարկումին: Մենք կ'աշխատինք ձեզի հետ՝ փորձելով գոհացնելու ձեր ցանկութիւնները, մինչեւ այն ատեն, որ կրնանք կատարել մեր օրինական պարտաւորութիւնները (Քալիֆորնիոյ կառավարութեան օրէնսգիրք 27491.3):

Մահացած անձի ունեցվածքը.

Օրինական ազգականները կրնան պահանջել մահացած անձին անձնական ունեցուածքին մեծ մասը, որ կը գտնուի մեր տրամադրութեան տակ: Պետական փաստաթուղթերը, օրինակ՝ վարորդական վկայականները եւ անձնագիրները, պէտք է վերադարձուին տրամադրող մարմինին՝ կարգադրութիւններու համար: Մահացած անձին ունեցվածքը առնելու համար հաճեցէ՛ք այցելել բժշկական փորձաքննութեան բաժին՝ Երկուշաբթիէն Հինգշաբթի ժամը 10:00 -էն 16:00: ավելի մանրամասն տեղեկանալու համար հաճեցէ՛ք ցանգել ունեցվածքի բաժին (323) 343-0515

Վերջնական տեղեկանքներ.

Վերջնական տեղեկանքները այն փաստաթուղթերն են, որոնք կը բացատրեն թէ ինչու մահացած է անձը : Հաճեցէ՛ք հաշուի առնել, որ մահուան պատճառի եւ ձեւի որոշումը կրնայ տեսել մի քանի օրէն մինչեւ մի քանի ամիս՝ կախուած մահուան պարագաներուն : Մենք ինքնաբերաբար չենք կապուիլ օրինական ազգականներուն հետ՝ տրամադրելու մեր հետաքննութեան արդիւնքները, քանի որ կը գիտակցինք, որ դուք կրնայ ըլլալ չուզէք քննարկել մահուան պատճառը: Եթէ կ'ուզէք քննարկել արդիւնքները, հաճեցէ՛ք հեռաձայնել մեզի (323) 343-0518 հեռաձայնի թիւով, որպէսզի ժամադրութիւն առնէք դատաբժիշկի փոխանորդի մը հետ, որ կրնայ քննարկել որոշումը: Հաճեցէ՛ք զննել վերջնական տեղեկանքի օրինակը առցանց՝ me.lacounty.gov կայքէն կամ հեռաձայնել մեր Արձանագրութիւններու բաժինին (323) 343-0695 հեռաձայնի թիւով:

Մահուան վկայագիրներ.

Մենք մահուան վկայագիրներ չենք տար: ավարտուած օրինակներ կարելի է ստանալ Կենսական արձանագրութիւններու բաժինէն.

- Հանրային առողջապահութեան բաժին (մահուան օրէն մինչեւ 60 օր)՝ (213) 288-7816
- Քարտուղար-արձանագրող՝ (800) 201-8999

Երբեմն մահուան վերջնական վկայագրի տրամադրումը կրնայ յետաձգուիլ կամ «ձգձգուիլ»՝ սպասելով գալիք հետաքննութեան, օրինակ բժշկական արձանագրութիւններու կամ ոստիկանութեան տեղեկանքի վերանայումին կամ դատաբժշկական ավելորդ փորձաքննութեան: Յուղարկաւորութիւնը յետաձգելու պէտք չկայ, եւ մահացած անձը կրնայ յուղարկաւորուիլ կամ այրուիլ փորձաքննութենէ մը ետք, նոյնիսկ եթէ մահուան պատճառը ու ձեւը չլուծուած են: Յուղարկաւորութեան տնօրէնը կրնայ օգնել ձեզի մահուան վկայականին վերաբերեալ կարգադրութիւններու եւ հարցումներու շուրջ:

Վեթերաններ.

Զինուած ուժերուն մէջ ծառայած, պատիւով արձակուած եւ ծառայութեան այլ պահանջներուն համապատասխանող անձեր կրնան վեթերանի յուղարկաւորութեան իրաւունք ունենալ: Տեղեկութիւններու համար հաճեցէ՛ք կապուիլ Լոս Անճելոս շրջանի ռազմական եւ վեթերաններու գործերու գրասենեակին՝ (213) 765-9681 հեռաձայնի թիւով: Վեթերաններու կամ ընկերային ապահովութեան նպաստներու վերաբերեալ ավելի մանրամասնութիւններու համար դիմեցէ՛ք ձեր յուղարկաւորութեան տնօրէնին:

Տեղափոխութեան վճարումներ.

Շրջամասէն կը պահանջուի որոշել մահացած անձին տեղափոխումին եւ սպասարկումին համար որոշ վճարումներ: Մենք կրնանք ձեզմէ գանձել այս ծառայութիւններուն համար, բացի եթէ վեթերանի, երեխայի (14 տարեկան եւ ակտիվ փոքր) կամ սպանութեան զոհի մը մահ է: Հաճեցէ՛ք փաստաթուղթեր տրամադրել կայուն եկամուտի մասին, եթէ չէք կրնար փակել ծախսերը եւ կ'ուզէք հրաժարուիլ վճարումէն: Ավելի տեղեկութիւններու համար հաճեցէ՛ք հեռաձայնել (323) 343-0572 թիւին:

Տուեալներու գաղտնիութիւն եւ տեղեկութիւններու տարածում .

Քալիֆորնիոյ մէջ մահացած անձի մը մահուան պատճառն ու ձեւը եւ քննութեան տեղեկանքը կը նկատուին հանրային արձանագրութիւն (Քալիֆորնիոյ կառավարութեան օրէնագիրք 6253), եւ գանձնք կրնան ստանալ լրատուամիջոցները եւ հանրութիւնը: Հանրային արձանագրութիւնները, ի վերջոյ, կ'ապահովեն կառավարութեան եւ այլ հաստատութիւններու պատասխանատուութեան ենթարկելու թափանցիկութիւնը եւ կ'օգնեն համայնքներու առաջնակարգի սահմանումին: Հաճեցէ՛ք նկատի ունենալ, որ ազգականներու լուսանկարները եւ կապը հաստատելու տուեալները մտած չեն ըլլար տեղեկանքի մէջ:

Շրջանի տնօրինում (դիակի այրում) .

Եթէ մահացած անձին ինքնութիւնը կը մնայ անյայտ, ազգականը չի գտնուիր, չ'ուզեր կամ կարողութիւն չունի կազմակերպելու դիակի այրումը, Շրջանը մարմինը դիակի այրումի կը դրկէ: Մահացած անձին ընտանիքը կամ հարազատները այրումի օրէն մինչեւ երկու (2) տարի ունին մոխիրը (կամ այրուած մարմինը) ուզելու համար: Հաճեցէ՛ք հետեւիլ այս նշուած քայլերուն.

Քայլ 1.

Մահացած անձին ազգականները պէտք է տպեն եւ ամբողջացնեն շրջանի տրորէնութեան փաստաթուղթերը, որոնք կարելի է գտնել առցանց՝ me.lacounty.gov/forms կայքէջէն: Զեւաթուղթերը վերադարձուցէ՛ք Վարչութեան ծանուցումներու բաժին՝ նամակով, ե-նամակով (notifications@me.lacounty.gov) կամ ֆաքսով՝ (323) 222-0343:

Երբ մոխիրը հասնի Լոս Անճելոս շրջանի դիարան (Հանրային առողջութեան բաժինին կողմէն գործարկուած), բաժանմունքը նամակով կը տեղեկացնէ մահացած անձին ազգականներուն, որ այրուած մարմինը պատրաստ է վերցնելու համար:

Քայլ 2.

Ստացէ՛ք տնօրէնութեան արտոնութիւն: Եթէ մահը պատահած է Լոս Անճելոս շրջանին կամ Լոնկ Պիչ կամ Փասատենա քաղաքներուն մէջ, հաճեցէ՛ք ստանալ ձեր տնօրէնութեան արտոնութիւնը համապատասխան առողջապահական բաժինէն: տնօրէնութեան արտոնութիւնը կարելի է ստանալ այս գրասենեակներէն՝ ժամադրութիւնով:

- Լոս Անճելոս շրջանի հանրային առողջապահութեան բաժին՝ (213) 288-7816
- Լոնկ Պիչի առողջապահութեան բաժին՝ (562) 570-4305
- Փասատենայի առողջապահութեան բաժին՝ (626) 744-6009

Քայլ 3.

Ներկայացուցէ՛ք տնօրէնութեան արտոնութիւնը շրջանի դիարանին: Պէտք է դիակը այրելուն գինը վճարէք ճիշդ չափով՝ կանխիկ, չէքով կամ Քրետիթ քարտով: Լոս Անճելոս շրջանի դիարանը կը գտնուի Լոս Անճելոս շրջանի գլխաւոր հիւանդանոցին մէջ:

- LA County General Hospital, 2051 Marengo St. IPT Bldg., 1st floor, RM C1G100, Los Angeles, 90033
- Հեռաձայն՝ (323) 409-7161

Քայլ 4.

Վճարումը ստանալէ ետք, ձեզի կը տրամադրուի Լոս Անճելոս շրջանի դիակիզարանէն/գերեզմանէն այրուած մարմինը ուզելու ուղղութիւններ: Հասցէն հետեւեալն է՝ 3301 East 1st Street, Los Angeles, 90063.